ԴԵՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

(ՆԵՐԴԻՐ-ԹԵՐԹԻԿ)

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՌՈՂԻ ՀԱՄԱՐ

# ԳԼԻՑԵՐԻՆ

**Glycerin**

**Առևտրային անվանում**

Գլիցերին

**Համընդհանուր անվանում**

Գլիցերոլ

**Դեղաձև**

Արտաքին և տեղային (միկրոհոգնա) կիրառման լուծույթ:

**Նկարագրություն**

Անգույն, խոնավածուծ, քաղցր համով օշարականման հեղուկ:

**Բաղադրություն**

Ակտիվ բաղադրատարր՝ գլիցերին – 90 գ,

օժանդակ նյութ՝ մաքրված ջուր – 10 գ:

**Դեղաբուժական խումբ**

Մաշկը պաշտպանող և փափկեցնող դեղեր:

Փորկապության բուժման համար կիրառվող դեղեր:

**Անատոմիական-բուժական-քիմիական ծածկագիր**

D11AX

A06AG04

**Դեղաբանական ազդեցություն**

Գլիցերինը տեղային ազդեցությամբ լուծողական դեղ է: Այն թեթևակի գրգռում է ուղիղ աղու լորձաթաղանթը և ռեֆլեկտոր մեխանիզմով խթանում է աղիների շարժունակությունը (պերիստալտիկա): Գլիցերինը նպաստում է կղազանգվածի փափկեցմանը:

Արտաքին կիրառման դեպքում ցուցաբերում է մաշկը պաշտպանող և փափկեցնող ազդեցություն:

**Դեղակինետիկա**

Գլիցերոլը գործնականում չի ներթափանցում մաշկ, սակայն լավ է ներծծվում լորձաթաղանթներից:

**Ցուցումներ**

Գլիցերինը ցուցված է՝

- տարբեր ծագումով փորկապությունների (այդ թվում՝ սովորական, տարիքային, սահմանափակ շարժունակության արդյունքում առաջացած),
- մաշկի չորության (տեղային կիրառում) բուժման համար:

**Կիրառման եղանակներ և դեղաչափեր**

*Ուղիղաղիքային կիրառում*

Մինչև 6 տարեկան երեխաների համար թույլատրելի օրական դեղաչափը 5 մլ է, 6 տարեկանից բարձր երեխաների և չափահասների համար՝ 5-15մլ: Դեղը ցանկալի է կիրառել նախաճաշից 15-20 րոպե անց:

*Ուղիղաղիքային կիրառման եղանակ*

5 մլ և 10 մլ ծավալով միկրոհոգնաները պատրաստի են ուղիղաղիքային կիրառման համար:

Անհրաժեշտ է բացել պոլիէթիլենային փաթեթը, հեռացնել ծայրադիրի կափարիչը և կիրառել անհրաժեշտ ծավալով: Միկրոհոգնան նախատեսված է միանվագ կիրառման համար:

*Տեղային կիրառում*

Քսել մաշկի ախտահարված հատվածներին՝ ըստ անհրաժեշտության:

**Հակացուցումներ**

Գլիցերինը հակացուցված է՝

- ուղիղաղիքային եղանակով կիրառելիս՝ թութքի (սրացման փուլում), հետանցքի ճաքերի, ուղիղ աղու բորբոքային հիվանդությունների և ուռուցքների դեպքում,
- տեղային կիրառելիս՝ գլիցերոլի նկատմամբ գերզգայնության դեպքում:

**Հղիություն և կրծքով կերակրման շրջան**

Գլիցերինը կարելի է կիրառել հղիության ընթացքում և կրծքով կերակրման շրջանում, սակայն նախքան օգտագործելը՝ անհրաժեշտ է խորհրդակցել բժշկի հետ:

**Կողմնակի ազդեցություններ**

Երկարատև տեղային կիրառման դեպքում՝ մաշկի գրգռվածություն, ալերգիկ ռեակցիաներ:

Երկարատև ուղիղաղիքային կիրառման դեպքում՝ ուղիղ աղու գրգռվածության երևույթներ, կղազատման ֆիզիոլոգիական պրոցեսի թուլացում:

**Գերդեղաչափում**

Գերդեղաչափման ախտանիշների վերաբերյալ տվյալներն առկա չեն:

**Կիրառման հատուկ հրահանգներ և նախազգուշացումներ**

Խորհուրդ չի տրվում գլիցերինը կանոնավոր կիրառել որպես լուծողական միջոց: Նշված նպատակով կիրառելիս աղիների նորմալ շարժունակության վերականգնումից հետո բուժումն անհրաժեշտ է դադարեցնել: Որպես լուծողական՝ դեղի կիրառման տևողությունը չպետք է գերազանցի մեկ շաբաթը:

**Փոխազդեցությունները այլ դեղերի հետ**

Այլ դեղերի հետ կլինիկորեն նշանակալի փոխազդեցություններ չեն գրանցվել, սակայն տեղային ազդեցությամբ այլ դեղերի հետ միաժամանակյա կիրառումը ցանկալի չէ:

**Փաթեթի բնութագրիչներ**

100 մլ ծավալով պլաստիկ սրվակներ, 30 մլ ծավալով ապակյա սրվակներ, 5 մլ կամ 10 մլ ծավալով՝ պոլիէթիլենային անհատական տոպրակների մեջ փաթեթավորված պլաստամասսե տարաներ (միկրոհոգնաներ):

**Պահման հատուկ պայմաններ**

Պահել 15-25$^{0}$C ջերմաստիճանի պայմաններում:

Պահել երեխաների համար անհասանելի տեղում:

**Պիտանիության ժամկետ**

4 տարի:

Դեղը չի կարելի կիրառել տուփի վրա նշված պիտանիության ժամկետը լրանալուց հետո:

**Դեղատնից բաց թողնելու կարգ**

Բաց է թողնվում առանց դեղատոմսի:

**Արտադրող**

««ԷՍԿՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ,

ՀՀ, 0079, Երևան, Նոր Նորքի 5-րդ զանգված, Միկոյան փ., շ. 13

Հեռ.՝ (+374 10) 673903, էլ.փոստ՝ farm-esco@mail.ru

**Գրանցման հավաստագրի իրավատեր**

«ԷՍԿՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ,

ՀՀ, Երևան, Նոր Նորքի 5-րդ զանգված, Միկոյան փ., շ. 13

Հեռ.՝ (+374 10) 673903, էլ.փոստ՝ farm-esco@mail.ru

**ИНСТРУКЦИЯ**
**по медицинскому применению препарата**
**ГЛИЦЕРИН**

**Торговое название препарата**
Глицерин

**Международное непатентованное название**
Глицерол (Glycerol)

**Основные синонимы**
Глицерин, Глицерол

**Лекарственная форма**
Раствор для наружного и местного (микроклизма) применения

**Описание**
Бесцветная, гигроскопическая, сиропообразная жидкость со сладким вкусом.

**Состав на 100 г**
Активное вещество – 90 г глицерин.
Вспомогательное вещество – 10 г вода очищенная.

**Фармакотерапевтическая группа**
Препарат с дерматопротекторным и смягчающим кожу действием.
Средства, применяемые для лечения запоров

**Код АТХ**
D11AX
A06AG04

**Фармакологические свойства**
Слабительное средство для местного применения. Оказывает легкое раздражающее действие на слизистую оболочку прямой кишки и рефлекторно стимулирует перистальтику. Способствует размягчению каловых масс.
При наружном применении оказывает дерматопротекторное действие, смягчает кожу и слизистые оболочки.

**Фармакокинетика**
Глицерол практически не всасывается в кожу, но хорошо абсорбируется слизистыми оболочками.

**Показания к применению**
Запоры различного генеза (в т.ч. привычные, возрастные, при ограниченной подвижности).
Сухость кожи и слизистых оболочек (для наружного применения).

**Способ применения и режим дозирования**
Ректально – детям до 6 лет вводят до 5 мл, взрослым и детям старше 6 лет 5 - 15 мл,
1 раз в день, желательно через 15 - 20 мин после завтрака.
Способ ректального применения: микроклизма 5мл и 10мл готова к применению. Необходимо вскрыть полиэтиленовый пакет, снять крышечку с аппликатора и использовать необходимый объем. Микроклизма предназначена для одноразового применения.

Наружно - смазывают пораженные участки по мере необходимости.

**Противопоказания**

При ректальном применении - геморрой в фазе обострения, трещины заднего прохода, воспалительные заболевания и опухоли прямой кишки;

При наружном применении - повышенная чувствительность к глицеролу.

**Применение при беременности и кормлении грудью**

Глицерин можно применять во время беременности и в период грудного вскармливания, однако перед применением препарата необходимо обратиться к врачу.

**Побочные действия**

При *длительном наружном применении:* раздражение, аллергические реакции.

При *длительном ректальном применении:* явления раздражения прямой кишки, ослабление физиологического процесса дефекации.

**Передозировка.**

Данных о симптомах передозировки препарата нет.

**Особые указания и меры предосторожности**

Регулярное применение в качестве слабительного средства не рекомендуется. При применении в качестве слабительного средства лечение прекращают после восстановления нормальной перистальтики кишечника. В качестве слабительного средства не принимать более одной недели.

**Взаимодействие с другими лекарственными средствами**

Клинически значимое взаимодействие с какими-либо другими лекарствами не описано, но нежелательно одновременное назначать с другими лекарственными средствами для наружного применения.

**Упаковка**

По 100мл пластиковых флаконах; по 30мл в стеклянных флаконах; по 5 мл и 10мл в пластмассовых тарах (микроклизма), упакованных в индивидуальные полиэтиленовые пакеты.

**Условия хранения**

Хранить при температуре 15- 25 °С, недоступном для детей месте.

Не применять препарат после окончания срока годности, указанного на упаковке!

**Срок годности** – 4 года.

**Условия отпуска из аптек** – Отпускается без рецепта врача.

**Производитель**

ООО "ЭСКО-ФАРМ" ,Республика Армения. Ереван 0079, V Нор Норкский массив,ул. Микояна 13 ,Тел.:(+37410) 673903

**Владелец торговой лицензии**

ООО "ЭСКО-ФАРМ",Республика Армения. Ереван 0079, V Нор Норкский массив,ул. Микояна 13. Тел.:(+37410) 673903